ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 810-Ա,Ք 14 հունիսի, 2013 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 թ. ԱՊՐԻԼԻ 26-Ի N 351-Ա/Ք ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածով, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 9-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1123 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թ. մարտի 13-ի N 144-Ն հրամանով հաստատված կարգի 6-րդ կետերի՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և նպատակային-ծրագրային ֆինանսավորման ծրագրերի նախագծերը քննարկելու և Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում դրանք ընդգրկելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար (հանձնաժողովի նախագահ),
Ս. Հարությունյան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ,

Հ. Թոքմաջյան	ՀՀ ԿԳՆ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտոր,
Լ. Մարդոյան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ,
Ի. Ծերեթելի	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման զարգացման վարչության գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,
Ս. Սողոմոնյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ,
Ա. Սարգսյան	ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետ,
Տ. Գալստյան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար):

2. Հանձնաժողովին՝ մինչև 2013 թ. օգոստոսի 1-ը քննարկել ստացված ծրագրերի հայտերը և ՀՀ 2014 թ. պետական բյուջեում դրանք ընդգրկելու վերաբերյալ ներկայացնել համապատասխան առաջարկություն:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 26-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և պետական նպատակային ծրագրերի քննարկման հանձնաժողովի ստեղծման և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թ. հունիսի 22-ի N 744-Ա/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 351-Ա/Ք հրամանը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ա. ԱՇՈՏՅԱՆ